

ՄԱԴՐԱՍԻ ՏՊԱԳՐԱՏԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԱՅԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Ընդունված տեսակետի համաձայն Մադրասի հայ գաղութում որոշ հաջորդականությամբ գործել են չորս տարբեր տպարաններ՝ Շահամիր Շահամիրյանի, Հարություն Շամվոնյանի, Սարգիս Աղավալյանցի և Հակոբ ու Հովսեփ Նազար Շահամիրյանների տպարանները¹։ Սակայն փաստերը վկայում են, որ այնտեղ եղել է միայն մեկ տպարան՝ Շահամիր Շահամիրյանի ստեղծած Մադրասի հայոց տպագրատունը, որը տարբեր ժամանակահատվածներում կրել է տարբեր անվանումներ։ Այդ տպագրատունը հնդկահայ գաղութում ունեցել է շատ ավելի մեծ դեր, քան ենթադրվում էր։

Ինչպես հայտնի է, Ե. Շահամիրյանը 1772 թ. Մադրասում իր 27-ամյա (և ոչ թե պատանի) ավագ որդու՝ Հակոբ Շահամիրյանի անունով հիմնում է հայ գաղթօջախի առաջին տպարանը, որը «Որոգայթ փառացի» հրատարակումից (1788—1789 թթ.)² հետո դադարում է գործելուց։ Այնուհետև հայ անդրանիկ պարբերականի՝ «Ազդարարի» խմբագիր Հարություն Շամվոնյանը 1789 թ. նույն քաղաքում հիմնում է իր սեփական տպարանը։ Բնականաբար հարց է ծագում, թե չ. Շամվոնյանն ինչու՞ չօգտագործեց Ե. Շահամիրյանի այդ ժամանակ արդեն անգործության մատնված տպարանը կամ նրա սարքավորումները, այլ փոխարենը ստեղծեց նոր տպարան, մի բան, որ կապված էր մեծ դժվարությունների հետ։ Առաջադրված հարցն ավելի հիմնավոր կդառնա, եթե հաշվի առնենք, որ վերոհիշյալ երկու գործիչները եղել են մոտ հարաբերությունների մեջ, և բացի այդ՝ նրանց տպագրական գործունեությունը հիմնականում ծառայել է միևնույն նպատակին, մի հանգամանք, որ չէր կարող չգրավել ուսումնասիրողների ուշադրությունը։ Այսպես, Ա. Կարինյանը գրում է. «Պարզվում է, որ Շամվոնյանը հնարավորություն չունի որևէ կերպ օգտագործել Շահամիրյանի տպարանը»³, իսկ Թ. Ավդալբեգյանը նշում է. «Մագրասում Շամվոնյանը ձեռք է բերում Հակոբ Շահամիրյանի անունով հայտնի տպարանը, բարեկարգում, նոր տառեր սարքում և սկսում հրատարակչական գործունեություն»⁴։ Այս միտքը շատ ավելի որոշակի է արտահայտել Մադրասի հայ գաղթօջախի պատմության քաջատեղյակ քահանա Ա. Նոգարյանը. «Ոչ մի խոսք, որ Շամվոնյան քահանան անխառնաճ թափեց ուղղելու և կարգի դնելու այն ամենը, ինչ որ պատկա-

1 Հակոբ և Հովսեփ Նազար Շահամիրյանների տպարանի մասին, ըստ էության մեղանում առաջին անգամ խոսել է Կ. Զինգերմանը, Նա, լծխտելով Հ. Շամվոնյանի և Ս. Աղավալյանցի կողմից նոր տպարանների բացելու վերաբերյալ ընդունված տեսակետը, գտնում էր, որ Ե. Շահամիրյանի տպարանը որոշ ընդմիջումներով գործել է մինչև XVIII դ. վերջը, իսկ XIX դ. սկզբին այդ տպարանը Ե. Շահամիրյանի ծոռների ղեկավարությամբ վերակառուցվել, հագեցվել նոր տառատեսակներով և շարունակել է գործել» (տե՛ս Կ. Զինգերման, Վոյտեիի «Կենսարի մահը» ողբերգության առաջին թարգմանիչը (Պատմա-բանասիրական հանդես, 1979, № 2, էջ 118—119)։

2 «Որոգայթ փառացի» հրատարակության ստույգ թվականը զեռես պարզված չէ, Հայտնի է միայն, որ այն հրատարակվել է 1788—1789 թվականների միջև ընկած ժամանակահատվածում (տե՛ս Թ. Ավդալբեգյան, Հայագիտական հետազոտություններ, Երևան, 1969, էջ 259—260), Ա. Ք. Иоаннисян, К истории возникновения «Западня честолюбия» (ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1948, № 3, էջ 25)։

3 Ա. Կարինյան, Ակնարկներ հայ պարբերական մամուլի պատմության, հ. 1, Երևան, 1956, էջ 197։

4 Թ. Ավդալբեգյան, նշվ. աշխ., էջ 248։

նում էր հնդկահայոց առաջին տպարանին⁵, Թեև Թ. Ավդալբեգյանի և Ա. Եդգարյանի տեսակետը շատ էր մոտ ճշմարտությանը, սակայն այն, չունենալով համապատասխան վկայակոչումներ, արձագանք չգտավ սովետահայ գիտական դրականության մեջ: Նման մոտեցման և, առհասարակ, Մադրասում երկրորդ տպարան ստեղծելու վերաբերյալ իշխող տեսակետի համար հիմք են հանդիսացել Հ. Շմավոնյանի հրատարակած «Պատմություն սրբոյ կուսին Մարիանէ» գրքի (1789 թ.) հիշատակարանի հետևյալ տողերը. «ով ոք վայելէք զբաղըրաճաշակ գրքուկս այս, յիշեցէ՛ք՝ Որդի վշտաց և գոյս գրոցս. որ յօրինեցաւ՝ ձեռամբ իմով՝ ամենայն պարագայս թէ տառաշինութիւնն, և թէ շարումն կապարից, Մախիւք և վաստակօք իմոյ՝ Յարութիւն Շմաւոն... Շիրաղեցի»⁶, Եթե նկատենք նաև, որ վերջինիս լույս ընծայած գործերի վրա տպված է «ի տպարանի Տէր Յարութիւն Շմաւոնեան Շիրաղեցույ» տեղեկությունը, ապա հասկանալի կը դառնա, թե որքան ծանրակշիռ հիմք ունի ընդունված տեսակետը: Այդուհանդերձ, այն մեր կարծիքով, չի կարող համարվել վերջնական, թեկուզև այն պատճառով, որ տպարանի «ամենայն պարագայս» ասելով՝ Հ. Շմավոնյանը նրկատի է ունեցել ոչ թե առհասարակ տպարանն իր ամբողջությամբ, այլ՝ միայն «տառաշինութիւնն և ... շարումն կապարից»: Սակայն տպատառերի (լիտերնիտի) պատրաստումը դեռ իրավունք չի վերապահում տպարանը նրա անունով կոչելու: Բավական է ասել, որ Հ. Շմավոնյանի տպարանի տպատառերը երկու անգամ նորացվել են այլոց կողմից⁷, սակայն տպարանը շարունակել է գործել իր նախկին անունով: Նույնը հավասարապես վերաբերում է նաև տառաշարությանը⁸, Բացի այդ, Հ. Շմավոնյանը ներքոհիշյալ նշված տառը պատրաստել է ոչ թե իր, այլ Ե. Շահամիրյանի տպարանի համար: Այս առիթով Հ. Շմավոնյանի գործերնեկեր Պետրոս Պոտնաղյանը «Բեկիսարիոս» գրքի «Առ բարեմիտ վերծանողս» գլխի տակ գրում է. «Տէրն իմ (Հ. Շմավոնյան—Հ. Խ.)... գալի Մադրաս... յաւուր միում՝ Ազնւամիտ Աղայ Շամիր Սուլթան այրն հանջաղեղ, ասացեալ է, Տէր հայր, լսեմ շնորհալի միտս ունիս, նոսր գիր մի նու՛կ պակասէ՛ ի տպարանէ մերմէ, արդ կարօղ ես յօրինել, քանզի՛ ցանկալի է ինձ այդ տպարան, վասն անուան որդոյ իմոյ: Տէրն իմ... խոստացեալ էր շինել, որպէս կայ նոյն գիր մինչև ցայսօր, յետ այնօրիկ՝ առաւել վստահեցեալ և սիրահարեալ, ձեռնամուխ եղև, բոլոր գիրն՝ զլիսովին ամենայն պարագայիւք յարմարել»⁹, Այստեղից երեւում է, որ Հ. Շմավոնյանը նոսրգրի տպատառը պատրաստել է Ե. Շահամիրյանի տպարանի համար, և, որ ամենակարևորն է, այդ տպատառը շարունակել է օգտագործել Հ. Շմավոնյանը («որպէս կայ նոյն գիր մինչև ցայսօր»): Դեռ ավելին, Պ. Պոտնաղյանի «յետ այնօրիկ... ձեռնամուխ եղև, բոլոր գիրն՝ զլիսովին ամենայն պարագայիւք յարմարել» տողերը վկայում են, որ Հ. Շմավոնյանը ոչ թե ստեղծել է նոր բոլորգրի տպատառեր, այլ եղածները «յարմարել», այսինքն, գեղեցկացրել, վայելուչ է դարձրել¹⁰: Ընդ որում, Հ. Շմավոնյանը բարեփոխել է հենց Ե. Շահամիրյանի տպարանի տառերը, քանզի Մադրասում ուրիշ հայկական տպարան չկար: Թեև Հ. Շմավոնյանը այդ գեղեցկացրած

⁵ Ա. Եդգարյան, Անդրանիկ հայ լրագիրը (սնոր ազգարար, Կալկաթա, 1950, № 1, էջ 10, 1951, № 3, էջ 21), տե՛ս նաև՝ Ա. Ալպոյաճյան, Պատմություն հայ գաղթականության, Կ. Գ., Կահիրե, 1961, էջ 405: Ե՛վ Ա. Ալպոյաճյանը, և՛ Ա. Եդգարյանը գտնում էին, որ Մադրասում գործել է մեկ տպարան՝ Ե. Շահամիրյանի տպարանը (տե՛ս Ա. Ալպոյաճյան, նշվ. աշխ., էջ 405—413, Ա. Եդգարյան, Անդրանիկ հայ լրագիրը (սնոր ազգարար, 1951, № 3, էջ 21—22):

⁶ Ս. Ղազիկյան, Հայկական նոր ատենագրություն և հանրագիտարան հայ կյանքի, 3-րդ տրակ, Վենետիկ, 1912, էջ 1903:

⁷ Տե՛ս «Գիրք անուանեալ զեկավար մանկաց», Մադրաս, 1797, էջ 284, Մարմոնտէլ, Բեկիսարիոս, Մադրաս, 1809, էջ 284:

⁸ Տե՛ս Ե. Շահամիրյան, Որոգայթ փառաց, Թիֆլիս, 1913, էջ 443:

⁹ Մարմոնտէլ, նշվ. աշխ., էջ 283—284:

¹⁰ Տե՛ս նաև՝ Արարհամ Կրետացի, Պատմութիւն անցիցը, Կալկաթա, 1976, էջ ԺԷ—ԺԸ:

տպատարածերով է իրականացնում իր առաջին հրատարակությունները, այնուամենայնիվ, դրանց մեջ կան այնպիսի տառատեսակներ ու նախշազարդեր, որոնց հանդիպում ենք Շ. Շահամիրյանի հրատարակություններում: Այսպես, օրինակ, Շ. Շահամիրյանի տպարանում լույս տեսած «Հորդորակի» (Մադրաս, 1772) 34 էջի¹¹ և 207 էջի ի զարդագիր գրխատառերը, «Որոգայթ փառացի» (Մադրաս, 1788—1789) 1-ին էջի մարդու դիմագծով¹² և 2-րդ էջի արծվի պատկերով¹³ զարդանկարները համապատասխանաբար կրկնվում են Ն. Շավոնյանի տպարանում հրատարակված «Գիրք Պրփիրի» (1793 թ.) 17 և 6-րդ էջերում (ն¹⁴ և ի զարդագիր գրխատառերը), ինչպես նաև «Գիրք քերականութեան» 1-ին հատորի (1791 թ.) 1-ին էջում (մարդու դիմագծով¹⁵ և արծվի պատկերով¹⁶ զարդանկարները): Այս ամենը աներկմտելիորեն ապացուցում է, որ Ն. Շավոնյանի ձեռքում է գտնվել Շ. Շահամիրյանի տպարանը: Իսկ թե ինչու՞ Շ. Շահամիրյանն իր տպարանը հանձնեց Ն. Շավոնյանի օգտագործմանը, դրան կանդա՞ղառենանք ավելի ուշ:

Ն. Շավոնյանի տպարանը որոշ ընդհատումներով գոյատևել է մինչև 1809 թ., ապա հաջորդեց Ս. Ազավալյանցի տպարանը¹⁷, որը գործեց մինչև 1812 թ.: Այս նույն տարում մեկ գիրք¹⁸ է հրատարակվում նաև «ի տպարանի երկոցունց հարադատացն Պարոնաց Յակոբայ և Յովսեփայ Նազար Շամբեանց»: Այսպիսով, երբ մադրասահայ բոլոր տպարանները՝ ըստ դրանց գործելու ժամանակամիջոցների, բերում ենք մեկ ընդհանուրի, ստացվում է հետևյալ պատկերը.

1. Շ. Շահամիրյանի տպարանը, 1772—1788/1789 թթ. (1788—1789 թթ.—մեկ գիրք)¹⁹:

2. Ն. Շավոնյանի տպարանը՝ 1789—1809 թթ. (1809 թ.—մեկ գիրք):

3. Ս. Ազավալյանցի տպարանը՝ 1809—1812 թթ. (1809 թ.—երեք գիրք, 1812 թ.—մեկ գիրք):

4. Հակոբ և Հովսեփ Նազար Շահամիրյանների տպարանը՝ 1812—1818 թթ. (1812 թ.—մեկ գիրք):

Ինչպես երևում է բերված համեմատությունից, մի տպարանը սկսել է գործել այն ժամանակ, երբ նախորդը դադարել է գործելուց: Եթե 1950 թ. հնդկահայերը տպարան ստեղծելու համար կրեցին մեծ դժվարություններ²⁰, ապա դրանից մոտ 150 տարի առաջ լրիվ բացառված էր նման հաջորդականությունը, և այն էլ մեկը մյուսով չպայմանավորված, նոր տպարանների ստեղծման հնարավորությունը:

Վերը տեսանք, թե Ն. Շավոնյանն ինչպես ստեղծեց իր «սեփական» տպարանը: Այժմ անդրադառնանք Ս. Ազավալյանցի տպարանին: Այստեղ լույս

11 Տե՛ս Մ. Բադրամյան, Հորդորակ, Մադրաս, 1772, էջ 52, 122 և այլն, Շ. Շահամիրյան, «Որոգայթ փառաց», Մադրաս, 1778—1789, էջ 7, 22, 449 և այլն:

12 Տե՛ս նաև՝ Մեսրոպ Երեց, Պատմութիւն մնացորդաց հայոց և վրաց, Մադրաս, 1775, էջ 148, Շ. Շահամիրյան, Տետրակ որ կոչի նշաւակ, Մադրաս, 1783, էջ 5:

13 Տե՛ս նաև՝ Մեսրոպ Երեց, նշվ. աշխ., էջ 148:

14 Տե՛ս նաև՝ նույն տեղում, էջ 17, 100, 126, 327 և այլն, Դաւիթ Անյաղթ, Գիրք սահմանաց, Մադրաս, 1797, էջ 26, 53, 63, 91 և այլն:

15 Տե՛ս նաև՝ «Գիրք Պրփիրի», Մադրաս, 1793, էջ 6, 47:

16 Նույն տեղում, էջ 46, տե՛ս նաև՝ Յ. Արզումբեան, Օրինակ հանդիսաւոր ծանուցման, Մադրաս, 1790, էջ 7, 38:

17 Տե՛ս Ռ. Իշխանյան, Հայ գիրքը 1512—1920, Երևան, 1981, էջ 99:

18 Ֆլորիան, Նումայ Պոմպիլիոս, Մադրաս, 1812:

19 Փակագծերում տրվում է տվյալ տարում հրատարակված գրքերի քանակը:

20 Ի. Ռայանը 1950 թ., խոսելով «նոր ազդարար» թերթի համար տպարան ստեղծելու կալվածահայերի հաղթահարած դժվարությունների մասին, մասնավորապես նշում է. «Ով ճանաչում է Արևելքը... նա կարող է միայն հասկանալ, թե ինչ է նշանակում ոչնչից... մի գրաշարանոց հիմնել» («նոր ազդարար», Կալկաթա, 1950, № 1, էջ 26):

տեսած գրքերի տիտղոսաթերթերի վրա նշված են, որ դրանք տպվել են «Սարգիս Մատուր Աղավալանց կողմից, և ի նորին Նորակերտ Տպարանի որ ի Մաղրասո: Սրանից հետևում է, որ Ս. Աղավալանցը Մաղրասում հիմնել է բոլորովին նոր տպարան: Սակայն այդ տպարանի հրատարակություններում սգտագործված են Ն. Շամվոնյանի տպարանի մի շարք նախազարդեր ու ծաղկատառեր. «Ազդարարի» 325 (1795 թ. № 10), 426, (1795 թ. № 12), 691 (1796 թ. № 17) էջերի շորս տարբեր զարդանկարները համապատասխանաբար կրկնված են Ս. Աղավալանցի հրատարակած «Սրբազնագործութեան» (1812 թ.) 27, 56, 13 և 415 էջերում: Կարելի է այս համեմատությունը շարունակել, սակայն բավարարվենք ասվածով և բերենք նաև գրավոր վկայություններ: Օրինակ. Շամվոնյանի հրատարակության վերջին գործի՝ «Բելիսարիոսի», «Հիշատակաբանը» Պ. Պուտնազյանը ավարտում է այսպես. «Ահա՛ այսուհետև Տէրն իմ (Ն. Շամվոնյանը—Ն. Խ.) ծերացեալ է՝ եթող ինձ կամաց այնոցիկ, որք կարող են իւրեանց ծախիւն անխարդախ գիրք, և նորոգ անմեղսածին բան տպագրել տալ ազատապէս»²¹, ինչպես նկատելի է, Ն. Շամվոնյանի տպարանը վերջին հրատարակությունն իրականացնելիս գտնվել է միանգամայն սարքին վիճակում և նրանում կարելի էր շարունակել տպագրության գործը: Այստեղ, ըստ Պուտնազյանի, միակ խոչընդոտը հանդիսացել է Ն. Շամվոնյանի ծերությունը²², ուստի նա հրատարակչի անունից փաստորեն մաղրասահայերին կոչ է անում ստանձնել տպարանի օգտագործման դժվարին պարտականությունը: Այս հայտարարությունից հետո Ն. Շամվոնյանի տպարանը տեսնում ենք արդեն Ս. Աղավալանցի անունով, որին, ի դեպ, շարունակում է աշխատակցել Պ. Պուտնազյանը²³: Որ Ս. Աղավալանցի ձեռքում գտնվել է Ն. Շամվոնյանի, ուրեմն՝ և Շ. Շահամիրյանի տպարանը, վկայում են նաև ներսես Շնորհալու «Ողբ Եղեսայ քաղաքի» գրքի (1810 թ.) առաջաբանի հետևյալ տողերը. «Յառաջաբանին մէջ,— գրում է Գ. Զարբհանյանը,— կծանուցանէ տպագրողն (նկատի ունի Ս. Աղավալանին—Ն. Խ.), ...գործարանս (տպարանս—Ն. Խ.) այս՝ որ եղև նախկին լուսածող սորա...»²⁴, Ուրեմն, մեկը շէր կարող «նորակերտ» տպարան ստեղծել, երբ ինքը հանդիսացել է այդ նույն տպարանի նախկին «լուսածողը», որը պետք է հասկանալ հոգալու իմաստով: Այլ կերպ ասած, Ս. Աղավալանցը փաստորեն եղել է Մաղրասի տպագրատան հաջորդ «նորակերտ» օգտագործողը:

Ս. Աղավալանցի մահից հետո տպարանը անցնում է Շահամիրյանի ժողնեի ձեռքը: Ա. Եղգարյանը գրում է. «Սարգիս Աղավալանի մահից հետո (1812 թ.—Ն. Խ.)՝ Աղա ձակոր Շամիրյանի թոռները սկսում են կրկին այս (Շ. Շահամիրյանի ստեղծած և Ն. Շամվոնյանի ու Ս. Աղավալանցի կողմից օգտագործված—Ն. Խ.) տպարանում շարունակել գործը: Սրանք նազարի որդիքն էին՝ ձակոր և Հովհաննես (Հովսեփ—Ն. Խ.) անուններով»²⁵, այսինքն՝ Շահամիր Շահամիրյանի ժողնեները²⁶, Համեմատությունը հաստատում է Ա. Եղ-

21 Մ ա ռ մ ո ն տ է ի, նշվ. աշխ., էջ 285:

22 Դժվար թե 69-ամյա Ն. Շամվոնյանը ծերության պատճառով թողներ հրատարակական գործը: Ըստ մեզ դրա իրական պատճառը հանդիսացել է նրա նյութական վիճակի խիստ վատացումը (տե՛ս Մ. Ս ե թ յ ա ն ց, Տ եր Հարություն Շամվոնյան հիմնադիր հայ հրապարակագրության (Նշանդես ամսօրյա», Վիեննա, 1923, № 5—6, էջ 239):

23 Տե՛ս «Բանգարան բարեգրադ», հ. Բ, Մաղրաս, 1810, տիտղոսաթերթ:

24 Գ. Զ ա ռ Բ հ ա ն յ ա ն, Պատմություն հայկական տպագրության, սկզբնավորութենն մինչև առ յ մեզ (1513—1895), Վենետիկ, 1895, էջ 205:

25 Ա. Ե ղ Գ ա ռ յ ա ն, Մաղրաս կամ հարավային Հնդկաստանի հայ գաղութը (սնոր ազգարար», Կալկաթա, 1951, № 3, էջ 22):

26 Ելնելով 1795 թ. նազար Շահամիրյանին Ղուկաս կաթողիկոսի գրած նամակից, որտեղ վերջինս ջնդհավորում է ձակոր նազարի-Շահամիրյանի ծնվելու կապակցությամբ (տե՛ս «Երվան հայոց պատմության», գիրք Բ, Բիֆլիս, 1889, էջ 645—646), պետք է կարծել, որ ծնունդը տեղի է ունեցել 1793—1794 թթ.: Ի դեպ, ձակոր անունը տրվել է ի պատիվ ձակոր Շահամիրյանի (տե՛ս

գարյանի նաև այս մտքի ճշմարտացիությունը: Եթե Հ. Շմավոնյանը, ստանձնելով Մադրասի տպագրատան օգտագործման պարտականությունը, զգալի աշխատանք կատարեց տպատառերի որակի ու տեսակի բարելավման գործում (նույնը որոշ վերապահումներով²⁷ և ավելի պակաս շրջանակներում, վերաբերում է նաև Ս. Աղավալյանցին), ապա կրտսեր Շահամիրյանները չզբաղվեցին նման խնդրով, ասենք, դրա կարիքն էլ չէր զգացվում: Վերջիններիս առաջմ մեզ հայտնի երկու հրատարակություններն իրականացվել են Ս. Աղավալյանցի և Հ. Շմավոնյանի օգտագործած տպատառերով²⁸ ու զարդանկարներով²⁹, Այսպիսով, Շ. Շահամիրյանի ստեղծած տպագրատունը կրտսեր Շահամիրյաններին է անցել այն վերափոխումներով հանդերձ, որոնք 1788—1812 թթ. ընթացքում կատարել էին Հ. Շմավոնյանն ու Ս. Աղավալյանցը: Կրտսեր Շահամիրյանների վերջին հրատարակությունը եղել է Վոլտերի «Կեսարի մահը» ողբերգությունը: Այս գործի հրատարակության տարեթիվը վերաբերյալ հայտնվել են իրարամերժ տեղեկություններ: Երկար ժամանակ այն համարվում էր 1818 թ.: Բայց Հ. Դավթյանը, Սփյուռքից ստանալով այդ գործի լուսանկար օրինակը, 1971 թ. հայտնեց, որ այդ գիրքը տպագրվել է 1812 թ.³⁰, Սակայն, 1981 թ. նա կրկին այդ գործը դասեց 1818 թ. լույս տեսած գրքերի շարքում³¹, Բանն այն է, որ Հ. Դավթյանի ստացած լուսանկարի կրկնօրինակներում հրատարակության տարեթիվն այնքան էլ պարզ չէ. այն կարելի է կարդալ և՛ 1818, և՛ 1812: Քանի դեռ չկա խնդրո առարկա գրքի իսկական օրինակը, պետք է ընդունել Հ. Դավթյանի վերջին տեսակետը:

Թեև կրտսեր Շահամիրյանների հրատարակություններում իրեւ հրատարակիչներ նշված են Հակոբ և Հովսեփ եղբայրները, բայց 1812 թ. նրանք ընդամենը 19 և 17 տարեկան էին և իսկական հրատարակիչը փաստորեն եղել է նրանց հայրը՝ Նազար Հակոբջանի Շահամիրյանը: Նշված հրատարակությունների տխնիքիկական մակարդակը ևս վկայում է, որ այն հրատարակել է տպագրության մեծ փորձ ունեցող անձնավորություն, իսկ Շահամիրյաններից 1812 թ. այդպիսին էր Նազար Շահամիրյանը: Նա, իբրև պոլիգրաֆիստ, դեռևս տարիներ առաջ իր փորձն էր հաղորդել Հ. Շմավոնյանին ու նրա օգնականներին³²:

Այժմ պարզենք, թե ինչու Շ. Շահամիրյանը որոշեց իր հիմնած ու երկար տարիներ օգտագործած տպարանը առանց որևէ հատուցման հանձնել Հարություն Շմավոնյանին: Պետք է նկատել, որ Հակոբ Շահամիրյանի անունը կրող տպարանը խիստ անբավարար է օգտագործվել: Բավական է ասել, որ 17 տա-

նույն տեղում, էջ 646): Իսկ Հովսեփ Նազարի Շահամիրյանը ծնվել է 1795 թ. (տե՛ս «Ազգագրար», Մադրաս, 1795, № 10, էջ 312):

²⁷ Մի շարք գրքերի բացակայությունը հնարավորություն չի տալիս անվերապահ հետևություն կատարել, սակայն, ըստ մեզ, «Նորակերտ» բառը ենթադրում է տպարանի որոշ վերափոխումների մասին:

²⁸ Հմմտ. «Սրբազնագործութիւն» (1812 թ.) և «Նումայ Պոմպիլիոս» (1812 թ.) գրքերի տպատառերը: Իսկ Հ. Շմավոնյանի հրատարակած «Տետրակ որ կոչի պաաճառ» (1804 թ.) գրքի Ա (էջ 11) և Յ (էջ 60) նախշազարդ գլխատառերը համապատասխանաբար հանգիպում են «Նումայ Պոմպիլիոսի» 141, 48 և այլ էջերում: Եթե Հ. Շմավոնյանը այս տառատեսակից օգտագործել է միայն երկուսը, իսկ Ս. Աղավալյանցը ամենևին չի օգտագործել, ապա կրտսեր Շահամիրյանների հրատարակությունները սփռված են դրանցով: Հասկանալի է, որ նշված տպատառերի ողջ տեսականին պատրաստվել է Հ. Շմավոնյանի ժամանակ:

²⁹ Վոլտերի «Ողբերգութիւն 'ի վերայ մահուանն Յուլիոս Կեսարու» գրքում օգտագործած երկու զարդանկարներից (էջ ԺԴ, 28, 38, 84) կան նաև «Ազգագրարի» 503 (1795, № 13), 639 (1795, № 16) էջերում և այլ գործերում:

³⁰ Տե՛ս Հ. Դավթյան, Վոլտերի «Կեսարի մահը» և Շեքսպիրի «Մուտքը մեզանում» («Գրական թերթ», 22. I. 1971):

³¹ «Հայկական սովետական հանրագիտարան», հ. 7, Երևան, 1981, էջ 129:

³² Տե՛ս Մարմոնտել, նշվ. աշխ., էջ 284:

րում նրանում հրատարակվել է ընդամենը 7 գործ, որոնց մի մասը ծավալով շատ փոքր է եղել: Ժիշտ է, Շ. Շահամիրյանն ունեցել է հրատարակչական գործունեության լայն ծրագիր, սակայն դա անձամբ իրականացնելու համար լիարժեք հնարավորություն չի ունեցել: Նա, լինելով առևտրական, գրական, հասարակական ու քաղաքական գործերով խիստ ծանրաբեռնված, բնականաբար, չէր կարող անմիջականորեն ղեկավարել տպարանի աշխատանքները: Ուստի այդ պարտականությունը կատարել է նրա ավագ որդին՝ Հակոբ Շահամիրյանը, որի անունով էլ, ի միջի այլոց, կոչվել է տպարանը, ինչպես 1774 թ. 29 տարեկան հասակում Հակոբը մահանում է, գործի հիմնական ծանրությունն ընկնում է Եղիազար Շահամիրյանի վրա: Սակայն 1787 թ. նա նույնպես 29 տարեկան հասակում մահանում է: Այսպիսով, Շ. Շահամիրյանը զրկվում է նաև տպագրական գործում կրտսեր որդու օգնությունից և հարկադրված է լինում անձամբ իրականացնել «Որոգայթ փառացի» նախնական տպագրությունը՝ օգնականներ ունենալով իր օտարազգի սպասավորներին³³ ու թոռանը: Եթե Շ. Շահամիրյանի համար, ինչպես ինքն է խոստովանում³⁴, ժամանակը չի բավարարել «Որոգայթ փառացի» նման ստեղծագործական աշխատանքը լիաժամյալ շարադրելու համար, ապա հասկանալի է, որ նա ի վիճակի չէր հետագայում իր ժամանակը տրամադրել տպագրական գործին: Ուստի, անհրաժեշտ էր մեկը, որ կարողանար շարունակել տպարանը ծառայեցնել իր նպատակին: Շ. Շահամիրյանը նախընտրեց քահանա Հարություն Շմավոնյանին և շտաբովեց իր կատարած ընտրությունում: Նազար Շահամիրյանի աջակցությամբ Հ. Շմավոնյանը տպագրության մարզում բավարար հմտություն ձեռք բերելուց հետո ստանձնում է Շահամիրյանի տպարանի տնօրինությունը: Սակայն դա չի նշանակում, թե տպարանը Հ. Շմավոնյանին է անցել սեփականության իրավունքով: Ամենևին. նրան փոխանցվել է միայն տպարանը օգտագործելու իրավունքը և այն էլ որոշակի նպատակների իրականացման պայմանով: Իրեն փոխանցված իրավունքի մասին քաջ գիտակցել է նաև Հ. Շմավոնյանը: Նա իր հրատարակած առաջին՝ «Պատմութիւն սրբոյ կուսին Մարիանէ» գրքի վրա տպարանի անվան վերաբերյալ որևէ նշում չի արել, այլ միայն գրել է. «Տպագրեալ ի Հնդկս ի մայրաքաղաքս Մազրաս Տառիւ յօրինեցեալ ի ձեռագործէ Յարութիւն քահանայի որդոյ Շմաւոն Շիրազեցի»³⁵: Ի հարկադրություն ձգված, սրբազան Տեառն Ղուկասու ամենայն հայոց կաթողիկոսին³⁶, Հիշյալ գործում Ղուկաս կաթողիկոսից հետո չի նշված Հերակլ թագավորի անունը, ինչպես դա արվում էր Շ. Շահամիրյանի հրատարակություններում: Հետաքրքրական է, որ երկրորդ ու հաջորդ գործերում և՛ տպարանն է կոչվում Հ. Շմավոնյանի անունով, և՛ ավելացվում է նաև Հերակլ թագավորի անունը: Մազրասի հրատարակություններում վրաց թագավորի անձի հիշատակման կարգը պահպանվեց ընդհուպ մինչև Շ. Շահամիրյանի մահը³⁶: Կասկած չկա, որ Հ. Շմավոնյանի հրատարակություններում այդ կարգի կիրառումը կատարվել է Շ. Շահամիրյանի ցուցումով և այն կապված է եղել Հայաստանի ազատագրման գործում Հերակլ թագավորին ներգրավելու Շ. Շահամիրյանի ձգտումով: Տպարանը Հ. Շմավոնյանին հանձնելուց հետո էլ Շ. Շահամիրյանը չդադարեցրեց իր ակտիվ մասնակցությունը հրատարակչական գործին: Նա Հ. Շմավոնյանի միջոցով տպագրել է տալիս Հ. Արղունյանի կոնդակները³⁷, Հերակլ թագավորին տված հրովարտակը³⁸ և այլ գործեր:

33 Տե՛ս Շ. Շահամիրյան, Որոգայթ փառաց, Թիֆլիս, 1913, էջ 444—445:

34 Նույն տեղում, էջ 132—133, 135:

35 Ա. Ղազիկյան, Նշվ. աշխ., էջ 1902:

36 Տե՛ս Ա. Ալպոյաճյան, Պատմություն հայ գաղթականության, հ. Գ, Կահիրե, 1961, էջ 406:

37 Տե՛ս «Ազգարար», Մազրաս, 1795, № 5, էջ 86—93:

38 Պ. Զորանյան, Վրացական ուղեգրությունները և նրանց տեղեկությունները հայերի մասին, Երևան, 1981, էջ 158:

Այսպիսով, վերոհիշյալ փաստերը մեզ բերում են այն համոզման, որ Շ. Շամվոնյանին հրատարակչական և հրապարակախոսական աշխատանքներում ներգրավելու նախաձեռնողը, ոգևորողն ու օժանդակողը եղել է Շ. Շահամիրյանը³⁹։ Իսկ Մադրասի տպարանի վերջնական լուծվածն էլ (1818 թ.) արդեն պայմանավորված էր Շ. Շահամիրյանի ժառանգների սնանկացմամբ։ Գ. Զարբանալյանը, ավարտելով Շ. Շահամիրյանի տպագրական գործունեության մասին իր խոսքը, նշում է. «ընդ ծանր պարտեօք հիծել, կը գրէ մեր միաբաններէն մեկը ի Մատրասէ 1819, երեկի տունն Շահամիրեանց յետ ի վաճառ տալոյ զստացուածս իւր անթիւն»⁴⁰։

Թեև Մադրասի տպարանների մասին շատ է խոսվել, սակայն սովետահայ գրականության մեջ ոչ մի անգամ չի նշվել, թե այդ տպարանները որտեղ են տեղակայված եղել։ Այս կապակցությամբ քահանա Տ. Հովակիմյանը հայտնում է, որ Մադրասի հայկական «եկեղեցին յուր ժամանակին ունեցել է դպրոց... և մի տպարան, ուր լույս են տեսել լրագիր և 31 զանազան գրքեր»⁴¹։ Տպարանը այժմ գոյություն ունի միայն իբրև շենք»⁴²։ Նշանակում է Մադրասի հայերեն բոլոր հրատարակությունները, այդ թվում և «Ազդարարը», տպագրվել են միևնույն շենքում տեղավորված տպարանում⁴³։ Ընդ որում, տպարանի շենքի կառուցողը նույնպես եղել է Շ. Շահամիրյանը. «Շամիր Սովթանում Շամիրյան... կկառուցանե Մադրասի հայոց դպրոցը, տպարանը, հիվանդանոցը և աղքատանոցը»⁴⁴։ Այս առումով միանգամայն իրավացի է Սիմեոն Որեանցին, երբ Շ. Շահամիրյանի տպարանը անվանել է «տպագրատուն»։ Նա, հանդիմանելով Շ. Շահամիրյանին, մասնավորապես նշում է. «գիշեր վայել էր քումդ անուան՝ տաժանմամբ մեծաւ գիր բերել տալ ի Յուանկատանու, և զտպագրատուն հաստատել»⁴⁵։ Տպագրատունը գտնվել է Շ. Շահամիրյանին պատկանող հողի վրա կառուցված թվով երրորդ հայոց եկեղեցու բակի արևմտյան կողմում։ Իսկ այդ եկեղեցու շինարարությունն ավարտվել է 1772 թ.⁴⁶։ Այսինքն՝ այն նույն տարում, երբ հիմնադրվել է Մադրասի տպարանը։ Կասկած չի կարող լինել, որ տպագրատան շինարարությունը ավարտվել է եկեղեցու շինարարության հետ միաժամանակ։ Ընդ որում, մադրասահայության համար տպագրատան ստեղծումը եղել է Շ. Շահամիրյանի լուսավորչական գործունեության մի օղակը, որը տեղի հայկական դպրոցի ու գրադարանի հետ կազմել է մի ամբողջություն։ Ի դեպ, ասենք, որ գրադարանը Մադրասում, ըստ Ա. Սդզարյանի հավաստի ենթադրության, հաստատվել է տպագրատան հետ միաժամանակ (1772 թ.)⁴⁷։ Իսկ դպրոցի հաստատման համար թեև դրամական միջոցները հավաքված են եղել ավելի վաղ, սակայն այն, ստույգ տվյալներով, հիմնվել է միայն 1784 թ. մարտի 4-ին⁴⁸։

Թվում էր, թե կրտսեր Շահամիրյանների սնանկացմամբ պետք է ավարտվեր նաև Մադրասի տպագրատան պատմությունը, մանավանդ որ 1846 թ. «Ազդարար» պարբերականը Մադրասում հրատարակվել է վիմատիպ և դրա

39 Տե՛ս նաև Ա. Ալպոյաճյան, նշվ. աշխ., էջ 405։

40 Գ. Զարբանալյան, նշվ. աշխ., էջ 200։

41 Իրականում հրատարակված գրքերի քանակը մի փոքր ավելի շատ է եղել։

42 Տ. Յովակիմյան, Մադրասի հայոց անցյալն ու ներկան (ԵՃԱԹԵ, Հալեպ—Սուրիա, 1929, էջ 373), տե՛ս նաև Բ. Դավթյան, Մադրասի հայոց անցյալն ու ներկան (Ենոթ ազդարար, Կալկաթա, 1953, № 9—11, էջ 57)։

43 Սա ևս մի փաստ է Մադրասում մեկ տպարան գործելու տեղակետի օգտին։

44 Թեոդիկ, Ամենուն տարեցույցը, Վենետիկ, 1926, էջ 622։

45 «Երեվան հայոց պատմության», հ. Ը, Թիֆլիս, 1908, էջ 578։

46 Բ. Դավթյան, նշվ. հոգվ., էջ 57։

47 Ա. Սդզարյան, Մադրաս կամ հարավային Հնդկաստանի հայ գաղութը (Ենոթ ազդարար, Կալկաթա, 1951—1952, № 4—5, էջ 32)։

48 Նույն տեղում։

պատճառը եղել է տեղում առ ի չգոյ է տպարանի»⁴⁹ Եվ իրոք, այն տեղափոխվել էր Կալկաթա Ամեն ոք, ով համեմատի «Շտեմարանի» (1821—1823 թթ.) 169, 308 և 320 էջերում գետնադրած երեք տարբեր զարդանկարները, ինչպես նաև 23(Ա), 236(Զ), 170(Ք), 237(Զ), 238(Ս) էջերի նախշազարդ գլխատառերը Ս. Աղավալյանցի հրատարակած «Սրբազանագործության» 3,77 և 291 էջերի համապատասխան զարդանկարներին⁵⁰ ու 28(Ա), 4(Զ), 22(Ք), 69(Զ), 265(Ս) էջերի նախշազարդ գլխատառերի հետ, կհամոզվի դրանց նույնության մեջ, Իսկ սրանից բխող հետևությունը մեկն է. Կալկաթայում լույս ընծայված հայերեն առաջին աշխարհաբար պարբերականը հրատարակվել է Մադրասի տպագրատան սարքավորումներով: Հայտնի դարձավ նաև տպարանը Մադրասից Կալկաթա տեղափոխելու որոշ մանրամասներ «Շտեմարանի» խմբագիր և «Օճանասփյուռ» ընկերության անդամ Մարտիրոս Մկրտչյանը 1820 թ. գրած մի հոդվածում մասնավորապես նշում է. «յաշողեցա Պարոն Պօղոս Յորդանանեան որ 'ի Մագրաս' գնել զՏպարան մի, զոր ազգասիրապէս հաճեցաւ ընծայել օճանասփիւռ ժողովոյն մերոյ»⁵¹, Սակայն որոշ անհաշտությունների հետևանքով, «Օճանասփյուռ» ընկերությունը, որը գտնվում էր Բումբելում, ժամանակավորապես ի վիճակի չի լինում սկսել տպագրական գործը, ուստի Կալկաթայում գտնվող «Իմաստասիրության» ընկերությունը դիմում է «Օճանասփյուռին» ժամանակավոր «փոխ տայց է նմա... Տպարանն»⁵² և Պ. Հորդանանյանի խորհրդով օճանասփյուռցիները «փոխ ետ նմա զնախասացեալ Տպարանն»⁵³: Այսպիսով, Շ. Շահամիրյանի տպարանը Մադրասից հետո իր գործունեությունը վերսկսում է Կալկաթայում:

Քանի որ Պ. Հորդանանյանը, ըստ Մ. Մկրտչյանի, տպարանը գնել էր Մադրասում և այն էլ՝ 1819 թ.⁵⁴, հասկանալի է, որ դրա վաճառողները եղել են կրտսեր Շահամիրյանները: Իսկ տպարանը գնելու տարեթիվն արդեն հուշում է Շահամիրյանների կողմից այն վաճառելու պատճառի մասին: Ինչպես տեսանք, 1819 թ. Շահամիրյանների ժառանգներին նյութական վիճակն այնքան էր վատացել, որ նրանք ստիպված են եղել վաճառել իրենց գույքը: Այս իրողությունը, ըստ երևույթին, նրանց վերջնականապես բերել է այն համոզման, որ իրենք արդեն ի վիճակի չեն լինի վերսկսելու տպագրական գործը: Իսկ Մադրասում էլ այլևս չի գտնվել մեկը, որն ստանձներ տեղում շարունակելու այդ գործը: Ուստի նրանք որոշում են տպարանը վաճառել: Ընդ որում, կրտսեր Շահամիրյանները մինչև վերջ աշխատել են Շ. Շահամիրյանի ստեղծած տպարանը պահել Մադրասում: «Օճանասփյուռի» անդամները, միովյալն ստեղծման օրվանից (1815 թ.) «վարանս էին ընկղմեալ, ոչ սակաւ վարանէր ընդ մեզ Ազգասէր բարեկամն մեր Պարոն Պօղոսն Յորդանանեան՝ առ... 'ի ստացումն Տպարանի միոյ»⁵⁵: Եթե նկատի առնենք Պ. Հորդանանյանի մադրասաբնակ⁵⁶ լինելու հանգամանքը, ապա դժվար չէ եզրակացնել, որ նա առնից առաջ պետք է փորձած լիներ ձեռք բերելու Շ. Շահամիրյանի տպարանի սարքավորումները, մասնավորապես որ 1813—1818 թթ. ընթացքում տպարանը գրեթե (եթե ոչ լրիվ) անգործության էր մատնված: Հենց այն փաստը, որ տպարանը

49 «Նոր ազգարար», Կալկաթա, 1951, № 3, էջ 22:

50 Այս նախշազարդերը կան նաև Հ. Շմալոնյանի հրատարակություններում: Տե՛ս Մարտի 1, նշվ. աշխ., էջ 262, «Ազգարար», Մադրաս, 1796, № 17, էջ 21, 1795, № 10, էջ 325:

51 Մ. Մկրտչյան, Աշխարհածանօթ հրապարակութիւն օճանասփիւռ ժողովոյն 'ի Բումբելի («Ազգասէր», Կալկաթա, 1847, № 103, էջ 245):

52 Նույն տեղում, էջ 246:

53 Նույն տեղում:

54 Տե՛ս Ա. Երեմյան, Զուղահայ-հնդկահայ մշակույթը և ժողովրդական բանահյուսությունը («Նոր ազգարար», Կալկաթա, 1951, № 3, էջ 7):

55 Մ. Մկրտչյան, նշվ. հոդվ., էջ 245:

56 Տե՛ս Մ. Սեթյանց, Հայկի և Շտեմարան լրագրի հնդկահայոց («Հանդես ամսօրյա», Վիննա, 1894, № 12, էջ 364), Ա. Երեմյան, նշվ. հոդվ., էջ 7:

րանը գնվել է միայն 1819 թ., խոսում է մեր հետեւության օգտին: Ըստ մեզ, տպարանի վաճառելու գործարքին մեծապես նպաստել է տպարանի գնելու նպատակը: «Օճանասփյուռ» ընկերությանը հոգեհարազատ են եղել Շ. Շահամիրյանի գաղափարները, այդ թվում և՛ հանրապետական⁵⁷:

Շ. Շահամիրյանի տպարանը Կալկաթայից այլևս չի տեղափոխվում Բոմբեյ, քանզի նախապես «Օճանասփյուռ» և «Իմաստասխնդրյան» ընկերությունները որոշում են հետագայում գործել համատեղ⁵⁸, դրանից հետո նրանց տպագրական գործունեությունը ծավալվում է Կալկաթայում՝ իրենց ձեռքի տակ ունենալով այդ տպարանը: Այս առումով, արդեն հասկանալի է դառնում, թե ինչու այն մերթ կոչվել է «Օճանասփյուռյան», մերթ «Իմաստասխնդրյան», մերթ էլ՝ «Հայոց տպարան»⁵⁹, Սրանցից բացի, այս նույն տպարանը կոչվել է նաև «Պողոս Հորդանանյանի նվիրած տպարան», որը դիտվել է իբրև առանձին տպարան: «Մասնավոր անձանց տպարաններից,— նշում է Հ. Դավթյանը,— առավել աչքի ընկնողը Հորդանանյանի տպարանն էր, ուր տպագրվել է «Հայելի Կալկաթյան» լրագիրը (1820) և հայերեն անդրանիկ աշխարհարար կատակերգությունը՝ «Խտրադիմայ դժողություն» (Կալկաթա, 1821)»⁶⁰: Նման տեսակետը գալիս է Կալկաթայում 1820—1821 թթ. հրատարակված գրքերում տպարանի վերաբերյալ նշված տեղեկություններից: Այսպես, օրինակ, վերոհիշյալ «Խտրադիմայ դժողություն» գրքի տիտղոսաթերթի վրա նշված է «տպագրեալ յընծայեալ Տպարանի Յորդանանեան Պարոն Պօղոսի, 'ի Յ. Տէր Յակոբեանէ»: Իսկ սա նշանակում է, որ հրատարակիչը ոչ թե Պ. Հորդանանյանն է, ինչպես կարծել են որոշ ուսումնասիրողներ, այլ Յ. Հակոբյանը, որի ձեռքում տվյալ պահին գտնվել է Պ. Հորդանանյանի նվիրած տպարանը, այսինքն՝ «Օճանասփյուռ» ընկերության տպարանը: Տեղին է նշել, որ այդ նույն գրքի հալբյւլածի տիտղոսաթերթում նշված է. «Տպագրեալ 'ի Հովհաննեսէ Տէր Յակոբեանի, Օճանասփյուռեանց տպարանի»⁶¹, ինչպես տեսանք, «Օճանասփյուռ» ընկերության սեփականությունը հանդիսացող տպարանը միևնույն ժամանակահատվածում և նույնիսկ միևնույն գրքում կոչվել է տարբեր անվանումներով: Նշված փաստը ակնառու ցույց է տալիս, որ այն ժամանակներում և մասնավորապես Հնդկաստանում, տպարանի անվանումը կաշուն կապ չի ունեցել տպարանի պատկանելիության հետ: Իբրև կանոն, ով որևէ տպարանում հրատարակել է այս կամ այն գործը, նա էլ իր հայեցողությամբ կոչել է տպարանը. մեկը շեշտը դրել է անձամբ իր կողմից հրատարակելու փաստի վրա, մյուսը՝ տպարանի նվիրաբերության, երրորդը՝ այն կազմակերպության, որի անդամ էր ինքը և այլն:

«Շտեմարան» լրագրի դադարելուց հետո տպարանի տառերը հանձնվում են տեղի եպիսկոպոսական ճեմարանին⁶²: Սակայն վերջինիս հրատարակություններն իրականացվել են այլ տպատառերով: Այս փաստի արձանագրումից հետո չէինք կասկածում Մ. Սեթյանցի այն կարծիքի վրա, ըստ որի «Օճանասփյուռ» ընկերությունն իր տպարանը նվիրել է տեղի մարդասիրական ճեմարանին⁶³, մանավանդ «Ազգասիրում» կար այսպիսի մի միտք. «Տպարան մար-

57 Տե՛ս «Շտեմարան», Կալկաթա, 1822, էջ 772—776 և այլն:

58 Տե՛ս Մ. Մ կր տ շ ե ա ն, նշվ. հոդվ., էջ 246:

59 Ա. Կ ա ռ ի ն յ ա ն, նշվ. աշխ., էջ 228:

60 «Հայկական սովետական հանրագիտարան», հ. 5, Երևան, 1979, էջ 178:

61 Ի Ր ա զ ե կ, Հայ անդրանիկ թատերագրությունը («Խտրադիմայ դժողություն») («Վեմ», Փարիզ, 1933, նոյեմբեր-դեկտեմբեր, 12 և 13 էջերի ներդիր լուսանկարը): Ի դեպ, «Շտեմարանում» հրատարակած բազմաթիվ հոդվածների վերջում գրված է՝ «Վ. Օ. Տ.»: Սա եղել է ոչ թե նշված պարբերականի խմբագիր Մ. Մկրտչյանի կեղծանունը, ինչպես կարծել է Ա. Կարինյանը, այլ՝ նրա պաշտոնի հապավումը և նշանակել է՝ «Վերատեսուչ օճանասփյուռեան տպարանին» (տե՛ս Մ. Ս ե թ յ ա ն ց, Հայելի և Շտեմարան լրագիրը հնդկահայոց, էջ 364):

62 Ա. Ե Ր Ե մ յ ա ն, նշվ. հոդվ., էջ 7:

63 Տե՛ս Մ. Ս ե թ յ ա ն ց, Հայելի և Շտեմարան լրագիրը հնդկահայոց, էջ 364:

դաստիարական ճեմարանի ընծայեալ Պարոն Պօղոսէ Որդանանեան»⁶⁴։ Բայց համեմատությունը միանգամայն այլ բան ցույց տվեց։ Մարդասիրական ճեմարանի տպարանը եղել է Կալկաթայում երկար ժամանակ գործած Ջնթլում Ավետյանի տպարանը⁶⁵։ Ընդ որում, այն ոչ թե նվիրել է Պ. Հորդանանյանը, այլ հենց ինքը՝ Ջնթլում Ավետյանը⁶⁶, որ զբաղեցնում էր այդ ճեմարանի հոգաբարձուի պաշտոնը։ Իսկ թե հետագայում որտեղ է օգտագործվել Շ. Շահամիրյանի տպարանը, մեզ չհաջողվեց պարզել։ Այսուհանգերձ, շենք կասկածում, որ այն XIX դարում շարունակել է ծառայել իր նպատակին, իսկ Մադրասի տպարանի շենքը գոյություն ունեցավ շուրջ 150 տարի⁶⁷։

Այսպիսով, Շ. Շահամիրյանի տպարանում հրատարակվել են ոչ միայն հայ առաջին քաղաքական գրքերն ու առաջին պարբերականը, այլև «Հայելի կալկաթյան» և «Շտեմարան» լրագրերն ու այլ արժեքավոր գրքեր։ Այդ տպարանի շենքում են վիճադատ հրատարակվել «Ազգաբար» (1846 թ.) և «Բանասեր» (1848 թ.) պարբերականները⁶⁸։ Սակայն վերոգրյալով չի սահմանափակվում Շ. Շահամիրյանի ձեռնարկած գործի արժեքը։ Նրա տպարանի հենքի վրա դեռևս XVIII դարում առաջացավ պոլիգրաֆիստների մի սովորական խումբ, որի անդամների մեջ տեսնում ենք նաև պրոֆեսիոնալ պոլիգրաֆիստների⁶⁹։ Այս անձինք որոշիչ դեր խաղացին XIX դարի կեսերին հնդկահայ գաղութի տպագրական արվեստի զարգացման գործում։

ИЗ ИСТОРИИ МАДРАССКОЙ ТИПОГРАФИИ

ГАЙК ХАЧАТРЯН

Резюме

Согласно общепринятому мнению, в Мадрасе действовали типографии Шаамира Шаамиряна, Арутюна Шмавоняна, Саргиса Агавальянца, Акопа и Овсепа Назар Шаамирянцев. Однако сравнение изданных в этих типографиях работ, а также соответствующих мест памятных записей позволяет утверждать, что издание всех книг в армянской колонии города осуществлялось в одной и той же типографии.

В 1772 г. Ш. Шаамирян основывает в Мадрасе армянскую типографию, которую он в 1788—1789 гг. по ряду причин передает основателю первого периодического издания «Аздарар» А. Шмавоняну. В 1809 г. типография переходит к С. Агавальянцу, а в 1812 г. — к потомкам Ш. Шаамиряна. Вследствие обнищания последних типография в 1819 г. была продана. В результате сделки типография была переведена в Калькутту и перешла в руки армянских обществ «Очанаспюр» и «Имастахндрян». В этой типографии печатались периодические издания «Аели Калькутян», «Штемаран» и ряд других изданий.

64 «Ազգասեր», Կալկաթա, 1846, № 69, էջ 135։

65 Հմմտ. Զ. Ավետյանի հրատարակած «Գիրք սաղմոսաց Դավթի» (1815) գրքի տպատառերը ճեմարանի հրատարակած «Ատալա, օրհորդն սիրազոհ» (1826 թ.) գրքի տպատառերի հետ։ Նույնությունը լավ է երևում հատկապես ճեմարանների վրա։

66 Տե՛ս Ա. Գ. Երեան Յարուբիւն, Բառարան անգղերէն եւ հայերէն, Կալկաթա, 1825, էջ է—Ը։

67 Տե՛ս Ա. Եղգարյան, Մադրաս կամ հարավային Հնդկաստանի հայ գաղութը (սնոր աղագրար», Կալկաթա, 1951, № 3, էջ 21)։

68 Նույն տեղում, էջ 22։

69 Տե՛ս Մ. Մխիթարյան, Հարություն Շմալոնյանը և նրա գործակիցները («Պատմա-բանասիրական հանդես», 1969, № 4, էջ 145)։